Կանանց աջակցման կենտրոն

# ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ ՀՀ վարչական դատարանում քննված գործեր

**2023**

# ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ ՀՀ վարչական դատարանում քննված գործեր

## Հետազոտություն

Հեղինակ՝ Զարուհի Հովհաննիսյան

Կանանց աջակցման կենտրոն | 2023

**«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ**
**Երևան 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնական հասկացություններ և սահմանումներ....4

Ներածություն....6

Հետազոտության նպատակը և մեթոդը....8

Գլուխ 1. ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների դեմ ներկայացված բողոքների քանակը՝ ըստ տարեթվերի....10

Գլուխ 2. Հայցվորների սեռը....14

Գլուխ 3. ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների դեմ ներկայացված բողոքների բովանդակությունը....15

Գլուխ 4. Վարչական դատարանի կողմից ընդունված դատական ակտերի բովանդակությունը....17

Գլուխ 5. Դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ....21

Ամփոփում....22

Առաջարկություններ....23

# Հիմնական հասկացություններ և սահմանումներ

**Ընտանիքում բռնություն** - ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության բոլոր գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում՝ նախկին կամ ներկա ամուսինների, զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք բռնություն կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն հասցեում:

**Նախազգուշացում** - Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոց է, որը կիրառվում է ոստիկանության կողմից՝ այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում:

**Անհետաձգելի միջամտության որոշում** - Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոց է, որը կիրառվում է ոստիկանության կողմից՝ այն դեպքերում, եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

**Պաշտպանական որոշում** - Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոց է, որը կիրառվում է դատարանի կողմից: Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա

համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու հոգաբարձության մարմինը:

# Ներածություն

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանվեցին ոստիկանության լիազորությունները ընտանեկան բռնության կանխարգելման շրջանակներում, որոնք միտված են ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը: Ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝ նախազգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը և պաշտպանական որոշումը (պաշտպանական որոշման կիրառման լիազորությունը դատարանինն է, ուստի, տվյալ հետազոտության շրջանակում այն չենք դիտարկում):

Ինչպես ամրագրված է Օրենքում, ոստիկանը պաշտպանության միջոցների կիրառման մասին պետք է կայացնի պատճառաբանված որոշում: Պաշտպանության միջոցները կիրառվում են՝ առաջնորդվելով Օրենքով սահմանված սկզբունքներով և ապահովելով միջամտության համաչափությունը: Դրանց կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելուն և քրեական հետապնդում իրականացնելուն:

Ըստ Օրենքի, **Նախազգուշացումը** կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանեկան բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում:

Նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության ծառայողի կայացրած պատճառաբանված որոշման պատճենը ընտանեկան բռնություն գործադրած անձին հանձնվում է ստորագրությամբ՝ առձեռն: Դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենն ուղարկվում է նրա հաշվառման վայր պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով:

1 https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672

Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ բռնություն գործադրած անձին հանձնվելուց կամ դրա բովանդակությունը նրան հեռախոսակապի միջոցով պարզաբանվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:

Ոստիկանության կողմից **Անհետաձգելի միջամտության որոշում** է կիրառվում, եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը: Եթե անհետաձգելի որոշման գործողության ընթացքում դատարանը քննում է պաշտպանական որոշման դիմում, ապա այն ուժի մեջ է մնում մինչև դատարանի կողմից որոշում կայացվելը:
Անհետաձգելի միջամտության որոշմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ, և որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ ընտանեկան բռնություն գործադրած անձին դրա մասին իրազեկելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Որոշման դեմ բողոք բերելը չի կասեցնում որոշման կատարումը: Վարչական բողոքը քննվում և դրա հիման վրա որոշում է կայացվում այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

# Հետազոտության նպատակը և մեթոդը

ՀՀ ոստիկանության կողմից ընտանեկան բռնության դեպքում կիրառված պաշտպանական որոշումների դեմ դատական ակտերի ուսումնասիրությունն ընդգրկում է 2018-2022 թվականներին կայացված դատական ակտերի շրջանակը: 2018-2022 թվականներին դատարանների կողմից ընտանեկան բռնության գործերով կայացված դատական ակտերի վերհանումը իրականացվել է www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգի միջոցով:

Կանանց աջակցման կենտրոնը 09.02.2023թ. մուտքագրված թիվ WSC-03-23 դիմել է նաև Դատական դեպարտամենտին՝ խնդրանքով տրամադրել 2018-2022թթ. ընթացքում ՀՀ դատարաններ բողոքարկված ՀՀ ոստիկանության կողմից նախազգուշացում և անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու/անվավեր ճանաչելու/ վերաբերյալ ՀՀ վարչական դատարանում առկա գործերի քանակը: Այդ գործերից քանիս է բավարավել, մերժվել, մասնակի բավարարվել, ինչպես նաև նշել առանձնացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշումների վերաբեյալ վիճակագրությունը:

Ըստ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի 21.02.2023թ. №ԴԴՎ-1 Ե-1394 պատասխան գրության. «ՀՀ ոստիկանության կողմից նախազգուշացում եւ անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու /անվավեր ճանաչելու/ վերաբերյալ վարչական գործերի և պաշտպանական որոշում կայացնելու մասին քաղաքացիական գործերի քննության վերաբերյալ Դատական դեպարտամենտում դատական վիճակագրություն կամ այլ հաշվառում չի վարվում և սպառիչ տեղեկատվություն տրամադրել հնարավոր չէ»:

Ուստի, մենք առաջնորդվել ենք www.datalex.am դատական ակտերի որոնման էլեկտրոնային համակարգի միջոցով վերհանված գործերի դիտարկման հնարավորությամբ, որը, սակայն ամբողջական համարվել չի կարող, քանի որ երբեմն համակարգում բոլոր գործերը չէ, որ հնարավոր է տեսնել:

Հետազոտության շրջանակներում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- ՀՀ ոստիկանության դեմ դատարանին ուղղված հայցադիմումների քանակը՝ ըստ տարեթվերի
- Հայցվորների սեռը.
- ՀՀ ոստիկանության դեմ դատարանին ուղղված հայցադիմումների բովանդակությունը.
- Դատարանի որոշման բովանդակությունը:

Ոստիկանության կողմից կիրառված պաշտպանական որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարանի որոշումների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու, թե որքանով են դատարանները զգայուն ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ, ի՞նչ չափորոշիչներով են առաջնորդվում և որքանով են բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված որոշումները, արդյո՞ք դատարանն ունի բավարար գիտելիքներ՝ ընտանեկան բռնության վերաբերյալ և գործում է բռնության ենթարկվածի անվտանգությունից ելնելով:

Հետազոտության ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքում վերհանվել են վերոնշյալ խնդիրներն ու մշակվել առաջարկներ՝ քաղաքականություն մշակողների համար՝ ուղղված դատահիրավական համակարգի առավել արդյունավետ և զգայուն մոտեցմանը:

# Գլուխ 1. ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների դեմ ներկայացված բողոքների քանակը՝ ըստ տարեթվերի

ՀՀ ոստիկանության կողմից կիրառվող նախազգուշացումները և անհետաձգելի միջամտության որոշումները սկսեցին կիրառվել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, 2018 թվականին հուլիսի 1-ից: Ըստ Ոստիկանության կողմից «Կանանց աջակցման կենտորն» ՀԿ-ին տրամադրած տվյալների՝ 2018-2022թթ. Ոստիկանությունը կիրառել է.

- 2018 թվականին 431 նախազգուշացում, 131 անհետաձգելի միջամտության որոշում,
- 2019 թվականին 796 նախազգուշացում, 260 անհետաձգելի միաջմտության որոշում,
- 2020 թվականին 831 նախազգուշացում, 337 անհետաձգելի միջամտության որոշում,
- 2021 թվականին 528 նախազգուշացում, 544 անհետաձգելի միջամտության որոշում,
- 2022 թվականին 556 նախազգուշացում, 619 անհետաձգելի միջամտության որոշում (Պատկեր՝ 1):

Պատկեր 1.




Ինչպես տեսնում ենք, ոստիկանության կողմից կիրառվող պաշտպանական միջոցները տարեցտարի ավելանում են, նկատվում է նաև դրական դինամիկա՝ կապված անհետաձգելի միջամտության որոշումների կիրառման առումով: 2018-2022 թվականներին ընտանեկան բռնության դեպքերով ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների դեմ ՀՀ վարչական դատարան բողոքների վերաբերյալ www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգում փնտրման արդյունքում վերհանվել է 45 դատական գործ, որոնցից 16-ը՝ նախազգուշացման, 28-ը՝ անհետաձգելի միջամտության որոշման վերաբերյալ, իսկ մեկ գործով տեղեկատվությունը սահմանափակված է (Պատկեր՝ 2):

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ նախազգուշացումը այնքան էլ արդյունավետ միջոց չէ՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության առումով, իսկ անհետաձգելի միջամտության որոշման պարագայում բռնարարի հանդեպ կիրառվում են կոնկրետ գործողություններ, որոնք կարող են երաշխավորել բռնության ենթարկված անձի անվտանգությունը: Կարծում ենք, այդ է նաև պատճառը, որ ՀՀ ոստիկանության կողմից կայացված որոշումների վերաբերյալ ՀՀ վարչական դատարան ներկայացված բողոքների ակնհայտ մեծամասնությունը վերաբերում է հենց անհետաձգելի միջամտության որոշումների անվավեր ճանաչմանը, քանի որ այն առավել գործուն և արդյունավետ միջոց է:

Պատկեր 2.

**Ընտանեկան բռնության դեպքերով ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված բողոքները**




Դեպքերի բաշխումն ըստ տարիների ցույց է տալիս.

- 2018թ. 2 գործ, որից 2-ն էլ անհետաձգելի միջամտության որոշման դեմ,
- 2019թ. 4 գործ, որից 4-ն էլ նախազգուշացման որոշման դեմ,
- 2020թ. 19 գործ, որից 8 նախազգուշացման, 10 անհետաձգելի միջամտության որոշման վերաբերյալ, մեկ գործով տեղեկատվությունը սահմանափակված է,
- 2021թ. 7 գործ, որից 2-ը նախազգուշացման, 5-ը՝ անհետաձգելի միջամտության որոշման վերաբերյալ
- 2022թ. 13 գործ, որից 2-ը նախազգուշացման, իսկ 11-ը անհետաձգելի միջամտության որոշման վերաբերյալ (Պատկեր՝ 3):

Պատկեր 3.


ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՑԵՐԸ
2018-2022 թվականներ
Նախազգուշացում
Անհետաձգելի միջամտության որոշում
Տեղեկատվությունը սահմանափակ է
15
10
5
0
2018
2019
2020
2021
2022

# Գլուխ 2. Հայցվորների սեռը

2018-2022 թվականներին դատարանների կողմից ընտանեկան բռնության դեպքերով ոստիկանության կայացված պաշտպանական որոշումների դեմ հայցվորներից 6-ը կին է, 39-ը՝ տղամարդ: (Պատկեր՝ 4):

Պատկեր 4.




Ինչպես փաստում է վիճակագրությունը, բռնություն գործադրած անձանց ընդգծված մեծամասնությունը տղամարդիկ են, սակայն Ոստիկանությունը երբեմն նաև որպես բռնություն գործադրած անձ է հաշվառում կանանց, հատկապես՝ երեխաների նկատմամբ, իսկ բողոք ներկայացնողը լինում է նախկին ամուսինը:

# Գլուխ 3. ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների դեմ ներկայացված բողոքների բովանդակությունը

Հետազոտության ընթացքում դիտարկվել է ՀՀ վարչական դատարանին ուղղված ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ 45 հայցադիմում, որոնցից վերադարձվել է 5 հայցադիմում, որոնց բողոքարկան ժամկետը բաց էր թողնված, որոշումն իր իրավաբանական ուժը կորցրել էր կամ չէր համապատասխանում վիճարկման հայց ներկայացնելու պահանջներին, 6 հայցադիմումի պահանջ մերժվել է՝ ոստիկանության կողմից կիրառված պաշտպանական որոշումը թողնելով անփոփոխ: Իսկ մնացած 34 գործով Վարչական դատարանը անվավեր է ճանաչել ոստիկանության կողմից կիրառված պաշտպանական միջոցը՝ բավարարելով հայցը, ինչպես նաև պարտավորեցրել, որպեսզի ՀՀ ոստիկանությունից բռնագանձվի պետական տուրքի համար նախատեսված գումարը, որոշ դեպքերում նաև խելամիտ վարձատրության գումարը:

Պատկեր 5.


ԴԻՏԱՐԿՎԵԼ Է ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 45 ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ
11.1%
13.3%
75.6%
Վերադարձվել է՝ 5 գործ
Մերժվել է՝ 6 գործ
Հայցը բավարարվել է՝ 34 գործ

# Գլուխ 4. Վարչական դատարանի կողմից ընդունված դատական ակտերի բովանդակությունը

ՀՀ վարչական դատարանին ուղղված ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության ոստիկանության կողմից կիրառված որոշումը բեկանելու վերաբերյալ 45 հայցադիմից 34-ը բավարարվել է հետևյալ հիմքերով.

- Դատարանը գտել է, որ միայն բռնության ենթարկված անձի կողմից ներկայացրած տվյալները և լրացրած հարցաթերթիկում նշված տվյալները չէին կարող բավարար լինել որոշմամբ նկարագրված արարքները կատարելու փաստը հաստատված համարելու համար, սակայն վարչական մարմինը, խախտելով վարչական վարույթի ի պաշտոնե քննության սկզբունքը, վիճարկվող որոշումը կայացնելուն նախորդող ժամանակահատվածում (վարույթի ընթացիկ փուլում) որևէ այլ ապացույց ձեռք չի բերել: Փաստացի դատարանը կասկածի տակ է դրել ընտանեկան բռնության ենթարկված անձի վկայությունն ու նույնիսկ անտեսել բռնության կրկնման ռիսկերը /ՎԴ2/0184/05/22/:

- Դատարանը գտել է, որ գործին կցված տեսագրությունում լսվող վիճաբանության և աղմուկի ձայների առկայությունն ավելի կամ պակաս հավանական չեն դարձնում բռնի արարք կատարելու փաստի գոյությունը: Այսինքն, ներկայացված տեսագրությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վերաբերելի ապացույց չէ/ ՎԴ2/0184/05/22/:

- Դատարանը գտել է, որ ոստիկանությունը ցուցաբերելով կանխակալ դիրքորոշում, անհիմն կիրառել է բոլոր սահմանափակումները, այն էլ թույլատրելի առավելագույն ժամկետներով, խախտել է օրինական, համաչափ և անհրաժեշտ միջոցներ կիրառելու պարտականությունը: Գործը քննելիս չի պարզվել, թե արդյոք առկա է ընտանիքում բռնության տեսակներից որևէ մեկը, չի ապահովել գործի հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ պարզումը և, ըստ դրա չի հիմնավորվել ու բացահայտվել, թե բռնությունն արդյոք կատարվել է և եթե այո, ապա ինչպիսի համաչափ միջամտություն պետք է ապահովվի:

- Դատարանը գտել է, որ որոշմամբ որևէ կերպ չի հիմնավորվել բռնության դրսևորման փաստը, ինչպես նաև հիմնավորված չի եղել բռնության կրկնվելու կամ անմիջականորեն սպառնացող վտանգը շարունակվելու հանգամանքը /ՎԴ2/0124/05/22/:

- Դատարանը պահանջել է ոստիկանությունից վարույթին առնչվող նյութերը և արձանագրել, որ ներկայացված վարույթի նյութերում առկա փաստաթղթերն, այդ թվում՝ կազմված արձանագրությունները, հարցաթերթիկը, գրված և լրացված են կա՛մ բռնության ենթարկված անձի կողմից, կա՛մ վերջինիս խոսքերով՝ ՀՀ ոստիկանության աշխատակցի կողմից, այսինքն՝ դրանցում առկա են միայն այն դիրքորոշումները և պնդումները, որոնք ներկայացվել են բռնության ենթարկված անձի կողմից: Ըստ դատական ակտի առկա չէ որևէ այնպիսի փաստաթուղթ, ըստ որի՝ վարույթն իրականացնող մարմինը լսել է նաև գործով մյուս կողմին, այսինքն բռնություն գործադրողին / ՎԴ/2790/05/22/:

- Դատարանն արձանագրել է, որ ոստիկանության կողմից կիրառված վարչական ակտը չի պարունակում բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ նշումներ, որոնք վարչական մարմնին հիմք կտան ընդունելու անհետաձգելի միջամտության որոշում:

- Դատարանը գտել է, որ գործում բացակայում է ընտանիքում բռնության փաստը հիմնավորող որևէ ապացույց, որոշմամբ բացակայում է նաև որևէ նշում, թե արդյոք առկա է հիմնավոր կասկած բռնության կիրառման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին:

- Դատարանի հիմնավորումներում նշվում է, որ վիճարկվող վարչական ակտից պարզ չէ նաև, թե ինչ նկատառումներից ելնելով է պատասխանողը հայցվորի նկատմամբ կայացրած անհետաձգելի միջամտության որոշմամբ 20-օրյա ժամկետով արգելել մոտենալ կամ այցելել բռնության ենթարկված անձը /ՎԴ/1489/05/22/:

- Դատարանը՝ հենվելով դատաքննության ընթացում բռնություն գործադրողի ցուցմունքի վրա, որը հերքել է իր կողմից կիրառված բռնության փաստը, գտել է, որ ոստիկանության տեսուչի կողմից «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշման կայացման հիմքում դրել է միայն բռնության ենթարկվածի բացատրությունը և միջոցներ չի ձեռնարկել վերջինիս հայտնած տեղեկությունների իսկությունը ճշտելու ուղղությամբ, այդ թվում՝ հիշյալ տեղեկությունների կապակցությամբ բռնություն գործադրողին լսելու / ՎԴ/0470/05/22/:

- Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից ենթադրյալ բռնությունը վիճարկվող որոշման մեջ որակվել է որպես ֆիզիկական բռնություն, սակայն Ոստիկանության իրավասու անձը որոշման մեջ չի հիմնավորել ենթադրյալ բռնության դրսևորման փաստը / ՎԴ/12825/05/21/:

- Դատարանը, հետազոտելով և գնահատելով տվյալ գործում առկա ապացույցները, գտել է, որ դրանցով չի հաստատվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստական հանգամանքը, որ հայցվորը թույլ է տվել այնպիսի արարք, որի համար նրա նկատմամբ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի շրջանակում պետք է կիրառվեր անհետաձգելի միջամտություն: Դատարանի գնահատմամբ վիճարկվող որոշմամբ որևէ կերպ չի հիմնավորվել ենթադրյալ բռնության դրսևորման փաստը, ինչպես նաև հիմնավորված չէ բռնության կրկնվելու կամ անմիջականորեն սպառնացող վտանգի շարունակվելու հանգամանքը /ՎԴ/11899/05/21/:

- Դատարանն արձանագրել է, որ բռնության ենթարկված անձի հաղորդման առթիվ և նյութերի նախապատրաստմամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա հարուցվել է քրեական գործ, ապա դատարանը նշում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու փաստը դեռևս բավարար չէ բռնության կիրառման փաստը հաստատված համարելու համար, ուստի Դատարանը գտնում է, որ այդ փաստարկն այս կամ այն կերպ չի կարող հիմք հանդիսանալ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը հաստատելու համար:

- Դատարանն առանձնակի նշել է այն հանգամանքը, որ վարչական մարմինը որոշման ընդունման վարույթում որևէ միջոց չի ձեռնարկել դատարան հայց ներկայացրած անձից համապատասխան բացատրություն վերցնելու կամ նրա դիրքորոշումը ճշտելու համար:

- Ըստ դատական ակտի, գործում առկա ապացույցների հետազոտման արդյունքում դատարանը հնարավոր չի համարել միանշանակ գալ այն հետևությանը, որ հայցվորը կատարել է իրեն վերագրվող արարքը / ՎԴ/6722/05/21/:

Այսպիսով, ՀՀ վարչական դատարանի դատական ակտերում արձանագրվող հիմնական հիմնավորումն այն է, որ ոստիկանության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են բռնության ենթարկված անձի կողմից հնչեցված բացատրության, նրա խոսքից լրացված հարցաթերթիկի հիման վրա: Ընդ որում, նշվում է, որ ոստիկանը հավասար չի վերաբերվել կողմերին և պաշտպանական որոշում կայացնելիս հիմնվել է բռնության ենթարկված անձի հաղորդման վրա, ինչով խախտել է կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Ավելին, ՀՀ վարչական դատարանին ուղղված ընտանեկան բռնություն գործադրած անձանց նկատմամբ նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության ոստիկանության կողմից կիրառված որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ միևնույն անձի կողմից առկա է 4 հայցադիմում՝ անհետաձգելի միջամտության որոշման վերացման վերաբերյալ, որոնցից 3-ը բավարարվել է, 1-ի վերաբերյալ տեղեկատվությունը փակ է ՎԴ/3857/05/21 , ՎԴ/9592/05/20, ՎԴ/7873/05/20, ՎԴ/6601/05/20:

Մեկ այլ պարագայում միևնույն անձի վերաբերյալ դատարանը կայացրել է 6 որոշում՝ անհետաձգելի միջամտության որոշման վերաբերյալ՝ ՎԴ/8596/05/18,ՎԴ/2025/05/20, ՎԴ/2153/05/20,ՎԴ/2435/05/20, ՎԴ/3239/05/20, ՎԴ/1236/05/21, որոնց պարագայում, ըստ դատական ակտի, առկա չեն եղել անհրաժեշտ և բավարար ապացույցներ առ այն, որ հայցվորը բռնության է ենթարկել անձին:

Փաստացի, ՀՀ վարչական դատարանի դիրքորոշումն այն է, որ 6 անգամ ոստիկանությունը չի կողմնորոշվել և սխալ որոշում է կայացրել: Նույնիսկ չի դիտարկվել կնոջ կողմից ահազանգ հնչեցնելու փաստը, որը անվտանգության և հետագա վտանգի կանխարգելման խնդիր է հետապնդում:

Պարզ չեն նաև Ոստիկանության պաշտպանական որոշման բեկանման փաստաթղթային հիմքերը, քանի որ գնահատման թերթիկը ոստիկանությունը լրացնում է բռնության ենթարկվողի միջոցով, այլ ոչ՝ բռնություն գործադրողի, որը բազմիցս նաև դատարանում հերքում է բռնության կիրառման փաստը:

# Գլուխ 5. Դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Այսպիսով դատարանի կողմից կայացված 34 որոշմամբ Ոստիկանությունից հօգուտ հայցվորների բռնագանձվել է պետական տուրքի գումարը, որը մինչ 2021թ. հոկտեմբերի 29-ը կազմել է 4 հազար ՀՀ դրամ, իսկ այնուհետև 10 հազար ՀՀ դրամ:

Բացի պետական տուրքի վարձավճարից ոստիկանությունից գանձվել են որոշ դեպքերում փոստային ծառայությունների, ինչպես նաև փաստաբանական ծախսերի համար վճարված գումարները, որոնք տատանվել է 25-30 հազար ՀՀ դրամի շրջանակներում:

# Ամփոփում

Այսպիսով, դիտարկելով ՀՀ վարչական դատարանին ուղղված ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության ոստիկանության կողմից կիրառված որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերի վերաբերյալ որոշումները կարելի է եզրակացնել, որ դատական համակարգը ընտանեկան բռնության դեպքերով հստակ չափորոշիչներ և մոտեցումներ չունի, որոնք կարող են ուղենշային լինել նման գործերը քննելիս:

Դատարանի կողմից կայացված որոշումները հիմնականում չեն ապացուցում անձի բռնի վարք չդրսևորելը, նույնիսկ կրկնվում են, քանի որ համակարգում նույնիսկ միևնույն անձի վերաբերյալ կա 6 պաշտպանական որոշում, որը դատարանը բեկանել է՝ հաշվի չառնելով բռնության կրկնման վտանգը: Դատարանի կողմից այս ծավալով ոստիկանության որոշումների անվավեր ճանաչելու փաստը լուրջ մտավախություն է առաջացնում առ այն, որ ոստիկանությունը կխուսափի կիրառել պաշտպանական որոշումներ՝ անպաշտպան թողնելով բռնության ենթարկվող անձանց:

Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ բռնության ենթարկված անձի անվտանգության խնդիրը դատարանն առաջնային չի դիտարկում, միաժամանակ ՀՀ ոստիկանության վրա դնելով պարտականություն՝ հիմնավորելու բռնության փաստը նաև այլ ապացույցներով: Հարկ է նշել, որ սույն գործերով զբաղվող մարմինը պարտականություն և ռեսուրս չունի նման գործառույթ իրականացնելու, քանի որ չի կարող այլ քննչական գործողություններ իրականացնել և այլ ապացույցներ ձեռք բերել, ինչն արդեն նախաքննական մարմնի լիազորություն է: Ոստիկանության գործառույթը բռնության ենթարկված անձի պաշտպանությունն է հետագա բռնություններից և այս պարագայում գործ ունենք առերևույթ հանցակազմ չպարունակող բռնության հետ:

# Առաջարկություններ

- Մշակել հստակ չափորոշիչներ, որոնցով կառաջնորդվի ՀՀ վարչական դատարանը՝ ՀՀ ոստիկանության կողմից կայացված նախազգուշացում և անհետաձգելի միջամտության որոշումների վերաբերյալ որոշում կայացնելիս՝ հաշվի առնելով բռնության ենթարկվող անձի անվտանգությունը:

- Բարձրացնել դատավորների գիտելիքները՝ <<Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին>> ՀՀ օրենքի և օրենքի շրջանակներում ոստիկանության գործառույթների վերաբերյալ:

- Բարձրացնել դատական համակարգի զգայունությունը գենդերային բռնության և ընտանեկան բռնության խնդիրների վերաբերյալ:

- Իրականացնել դատական գործերի վերլուծություն և գնահատել դատավորների կայացրած որոշումների հիմնավորվածությունը:

- Վարել վիճակագրություն՝ ընդ որում սեռով տարբերակված, որը կներկայացնի դատական գործերի վերաբերյալ ողջ պատկերը:

- Վարել առանձնացված վիճակագրություն՝ ոստիկանության կողմից կիրառված պաշտպանական միջոցների անվավեր ճանաչման գործերով, վեր հանել միտումները՝ ըստ տարեթվերի: